



CDL-AD(2020)016
Or. Engl.

Ստրասբուրգ, 22 հունիսի, 2020թ.

Կարծիք No. 988/2020

Եվրոպական հանձնաժողով՝ հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով

(Վենետիկյան հանձնաժողով)

Հայաստան

Կարծիք

Սահմանադրական դատարանի դատավորների լիազորությունների վերաբերյալ սահմանադրական փոփոխությունների նախագծի համատեքստում երեք հարցերի վերաբերյալ

Ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 2020թ. հունիսի 19-ին գրավոր ընթացակարգով՝ փոխարինելով 123-րդ լիազումար նիստին՝

հետևյալ անձանց մեկնաբանությունների հիման վրա.

Պրն. Ֆիլիպ Դիմիտրով (Անդամ, Բուլղարիա)

Պրն. Մայքլ Ֆրենդո (Անդամ, Մալթա)

Պրն. Քրիստոֆ Գրաբենվարթեր (Անդամ, Ավստրիա)

Պրն. Այրիկ Հոլմոյվիկ (Փոխարինող անդամ, Նորվեգիա)

Սույն փաստաթուղթը չի բաժանվելու հանդիպման ժամանակ: Խնդրում ենք բերել այս օրինակը:

www.Venice.coe.int



I. Ներածություն.....3

II. Իրավական և փաստական հիմքեր.....3

Ա. Իրավական հիմքեր.3

Բ. Փաստական հիմքեր.....5

III. Իշխանությունների հատուկ հարցերը և բացատրություններ.....8

IV. Վերլուծություն.....10

Ա. Առաջին հարց. *Ներկա իրավիճակում ո՞րն է լավագույն եղանակը՝ ամբողջությամբ կյանքի կոչելու Սահմանադրությամբ (2015 թ.-ի փոփոխություններով) սահմանված Սահմանադրական դատարանի նոր մոդելը:*10

1. Կիրառելի միջազգային չափանիշները և նախկին կարծիքներ.....10

2. Անցումային 213-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները11

Բ. Երկրորդ հարց. *Եվրոպական լավագույն չափանիշների տեսանկյունից արդյո՞ք ընդունելի կլինի, եթե Դատարանի լիազորությունների շրջանակի փոփոխությունները սահմանափակվեն փոփոխման ոչ ենթակա սահմանադրական հոդվածների հետ համապատասխանության նախնական սահմանադրական քննությամբ և դրա համար սահմանվի հարաբերականորեն կարճ ժամկետ:*18

Գ. Երրորդ հարց. *Արդյո՞ք Ազգային ժողովը չպետք է ունենա լիազորություն՝ չեղարկելու ավելի վաղ նշանակված հանրաքվեն, որը կասեցվել է համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության հետևանքով:*21

V. Եզրակացություններ.....22

I. Ներածություն

1. 2020 թ. մայիսի 12-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար պարոն Ռուստամ Բադալյանը Վենետիկի հանձնաժողովին խնդրեց կարծիք տրամադրել Սահմանադրական դատարանի դատավորների լիազորությունների սահմանադրական փոփոխությունների նախագծի համատեքստում երեք իրավական հարցերի վերաբերյալ (CDL-REF(2020)025).

2. Պրն. Դիմիտրովը, պրն. Ֆրենդոն, պրն. Գրաբենվարթերը և պրն. Հովմյովիկը սույն կարծիքի զեկուցողներն են:

3. 2020 թ.-ի մայիսի 25-27-ը զեկուցողները և Վենետիկի հանձնաժողովի քարտուղարությունը մի շարք տեսակոնֆերանս-հանդիպումներ ունեցան Սահմանադրական դատարանի ներկայացուցիչների, խորհրդարանական երեք խմբակցությունների՝ ներառյալ ընդդիմության, Խորհրդարանի պետական-իրավական հարցերի հանձնաժողովի նախագահի, Արդարադատության նախարարի և Երևանի դիվանագիտական համայնքի, ինչպես նաև քաղհասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Վենետիկի հանձնաժողովը շնորհակալ է իշխանություններին և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակին՝ հանդիպումները կազմակերպելու համար:

4. Այս կարծիքը մշակվել է զեկուցողների մեկնաբանությունների և տեսակոնֆերանս-հանդիպումների արդյունքների հիման վրա: Այն ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 2020 թ. հունիսի 19-ին գրավոր ընթացակարգով, որը փոխարինել է 123-րդ լիազումար նիստին Վենետիկում COVID-19-ի պատճառով:

II. Իրավական և փաստական հիմքեր

Ա. Իրավական հիմքեր

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ ընդունված 1995 թ.-ի հուլիսի 5-ին, վերջին 25 տարիների ընթացքում անցել է բարեփոխումների երկու մեծ գործընթաց, այդ թվում՝ 2005 թ.-ի նոյեմբերի 27-ին հանրաքվեի միջոցով կատարված փոփոխությունները և 2015 թ.-ի դեկտեմբերի 6-ին հանրաքվեի միջոցով կատարված փոփոխությունները:^{1,2}

6. Սահմանադրական փոփոխությունների արդյունքում նաև էականորեն փոփոխվել են Սահմանադրական դատարանի կազմին առնչվող սահմանադրական դրույթները, որոնք մասնավորապես վերաբերում են Սահմանադրական դատարանի դատավորներ նշանակող մարմիններին և Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետին: 1995 թ.-ի Սահմանադրության (մինչ 2005 թ.-ի փոփոխությունը) Հոդված 99-ի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից, որից հինգին՝ նշանակում է Ազգային ժողովը, չորսին՝ Հանրապետության նախագահը»: Ըստ Հոդված 96-ի՝ Սահմանադրական դատարանի անդամը կարող էր պաշտոնավարել մինչև 70 տարին լրանալը: 7. 2005 թ.-ի սահմանադրական փոփոխություններով Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման կարգում և պաշտոնավարման ժամկետներում որոշ

¹ Տես CDL-AD(2005)025 Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ վերջնական կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 64-րդ լիազումար նիստում (2005 թ. հոկտեմբերի 21-22), CDL-PI(2015)015 Նախնական կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ, CDL-PI(2015)019 Երկրորդ նախնական կարծիք փոփոխությունների նախագծի, մասնավորապես՝ Հայաստանի սահմանադրության 8-րդ, 9-րդ, 11-16-րդ գլուխների վերաբերյալ, CDL-AD(2015)037 Առաջին կարծիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (1-7-րդ և 10-րդ գլուխների) փոփոխությունների նախագծի վերաբերյալ հավանության արժանացած Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 104-րդ լիազումար նիստում (2015 թ. հոկտեմբերի 23-24) և CDL-AD(2015)038 Երկրորդ կարծիք Հայաստանի Հանրապետության սահմանադրության (մասնավորապես՝ 8-րդ, 9-րդ, 11-16-րդ գլուխների) փոփոխությունների նախագծի վերաբերյալ հավանության արժանացած Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 104-րդ լիազումար նիստում (2015 թ. հոկտեմբերի 23-24):

փոփոխություններ կատարվեցին: Համաձայն Հոդված 99-ի (2005 թ. փոփոխություններով փոփոխված)՝ Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից: Չորս անդամ նշանակվում էր Հանրապետության նախագահի կողմից (Հոդված 55(10)), իսկ հինգ անդամ նշանակվում էր Ազգային ժողովի կողմից՝ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ (Հոդված 83(1)): Համաձայն Հոդված 96-ի՝ «Դատավորը և Սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում են մինչև 65 տարին լրանալը»:

8. 2015 թ.-ի փոփոխությունների արդյունքում էական փոփոխություններ կատարվեցին Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման կարգում, նրանց նշանակող մարմիններում և պաշտոնավարման ժամկետներում: Այս փոփոխությունները ներդրեցին «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ նոր Գլուխ 7-ը, որը նաև մանրամասն դրույթներ է ներառում Սահմանադրական դատարանի վերաբերյալ: Համաձայն Սահմանադրության Գլուխ 7-ի Հոդված 166 (1)-ի՝ Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով և տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ Դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորներ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

9. Վենետիկի հանձնաժողովն իր 2015 թ.-ի «Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ երկրորդ կարծիքի» մեջ նշել է, որ Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության համար պատգամավորների ընդհանուր ձայների առնվազն երեք հինգերորդի որակյալ մեծամասնության նոր պահանջի ներդրումը շատ ողջունելի է³: Եվ իսկապես, այդ փոփոխությունը հետևում էր Հանձնաժողովի՝ սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ առաջին կարծիքի մեջ արած նախորդ առաջարկությանը⁴: Հանձնաժողովը համարել է, որ Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման համար ձայների որակյալ մեծամասնության պահանջով ինչպես մեծամասնությունը, այնպես էլ ընդդիմությունը կառաջարկեն բարձր որակավորում ունեցող թեկնածուներ, որոնք ընդունելի կլինեն մյուս կողմի համար⁵: Եվ ի վերջո՝ Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետի և կենսաթոշակային տարիքի հետ կապված Հանձնաժողովն իր առաջին կարծիքի մեջ գտել է, որ Հոդված 166-ում առկա դրույթը, որով նախատեսվում է, որ Սահմանադրական դատարանի դատավորները պաշտոնավարում են 12 տարի, մինչև 70 տարին լրանալը, և չեն կարող վերընտրվել Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում, համահունչ է եվրոպական պրակտիկային⁶:

10. Սահմանադրական դատարանի նախագահի ընտրությանը վերաբերող սահմանադրական դրույթները նույնպես զգալիորեն վերանայվել են սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Ըստ 1995 թ.-ի Սահմանադրության (մինչև 2005 թ.-ի փոփոխությունները), Սահմանադրական դատարանի նախագահը նշանակվում էր Ազգային ժողովի կողմից՝ Դատարանի կազմից (Հոդված 83(2)): Եթե Սահմանադրական դատարանի կազմավորումից հետո երեսնորյա ժամկետում Ազգային ժողովը Սահմանադրական դատարանի նախագահ չէր նշանակում, ապա վերջինս նշանակվում էր Հանրապետության նախագահի կողմից (Հոդված 83 (2) և Հոդված 55 (10)): Դատարանի նախագահ նշանակելու այս մեթոդը 2005 թվականին ընդհանուր առմամբ պահպանվել է՝ այն տարբերությամբ, որ 2005 թ.-ի տարբերակում Ազգային ժողովը նախագահ է նշանակում Դատարանի կազմից, նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո երեսնորյա ժամկետում՝ «Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ» (Հոդված 83(2)-ը 2005թ.-ի տարբերակում):

11. 2015 թ.-ի բարեփոխումների արդյունքում ամբողջովին փոփոխվեց նախագահի նշանակման մեթոդը և Ազգային ժողովի մասնակցությունը բացառվեց նշանակման կարգում: Համաձայն նոր Հոդված 166(2)-ի՝ Սահմանադրական դատարանն իր կազմից ընտրում է

³ CDL-AD(2015)038, պարբ. 49.

⁴ CDL-AD(2015)037, պարբ. 162.

⁵ *Ibid.*

⁶ CDL-AD(2015)037, պարբ. 165.

Դատարանի նախագահ և փոխնախագահ: Մեկ այլ կարևոր տարբերություն վերաբերում է Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետին: Սահմանադրության 1995 և 2005 թվականների տարբերակները չէին նախատեսում նախագահի պաշտոնավարման որևէ կոնկրետ ժամկետ և, հետևաբար, նախագահի պաշտոնավարման ժամկետի համար կիրառվում էր դատավորների և Դատարանի անդամների կենսաթոշակային տարիքի վերաբերյալ ընդհանուր դրույթը: Այժմ նախագահն ընտրվում է վեց տարի ժամկետով՝ առանց վերստին ընտրվելու իրավունքի: 2015 թ.-ի կարծիքում Հանձնաժողովը համարել է, որ Դատարանի նախագահի ընտրության այս մոդելը Դատարանի անկախության լավ երաշխիք է⁷:

12. Թեև այս հիմնական փոփոխությունները ներդրվել են 2015 թ.-ի փոփոխություններով, Սահմանադրության Գլուխ 16-ի (Եզրափակիչ և անգումային դրույթներ) անգումային Հոդված 213-ր սահմանում է, որ «Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց յիսգորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:» Ինչպես նաև, «Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները կատարում են հաջորդաբար՝ Հանրապետության նախագահը, Դատավորների ընդհանուր ժողովը և Կառավարությունը»: Նման անցումային դրույթ կար նաև 2005 թ.-ի Սահմանադրության մեջ (Հոդված 117(13)):

13. Ըստ անցումային Հոդված 209(6)-ի՝ 2015 թվականի Սահմանադրության 7-րդ գլուխը (որում առկա են Սահմանադրական դատարանի դատավորների և նախագահի նշանակմանը վերաբերյալ դրույթներ) «ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: Մինչ այդ շարունակում են գործել 2005 թ.-ի փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները»: Նախագահ Սարգսյանն ընտրվել է 2018 թ.-ի մարտի 2-ին և ստանձնել պաշտոնը 2018 թ.-ի ապրիլի 9-ին: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանում մինչև 2018 թ. ապրիլի 9-ը կատարված նշանակումների (այդ թվում՝ դատավորների և նախագահի) նկատմամբ կիրառելի էին Սահմանադրության 2005 թ.-ի տարբերակի համապատասխան դրույթները: 2015 թ.-ի փոփոխությունների արդյունքում ընդունված նոր դրույթները կիրառվում են միայն այն նշանակումների համար, որոնք կատարվել են այդ ամսաթվից հետո:

Բ. Փաստական հիմքեր

14. 2018 թ.-ի գարնան իրադարձությունների արդյունքում, որոնք Հայաստանում անվանում են «Թավշյա հեղափոխություն», նախորդ իշխանությունները խաղաղ ճանապարհով իշխանազրկվեցին, իսկ 2018 թ. մայիսին նախկին ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը նշանակվեց Վարչապետի պաշտոնում: 2018 թ.-ի դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում, Նիկոլ Փաշինյանին սատարող «Իմ քայլը» դաշինքը Ազգային ժողովում ստացավ 132-ից 88 մանդատ (որը սահմանադրական մեծամասնություն է), մինչդեռ նախկին իշխող Հանրապետական կուսակցությունը ոչ մի մանդատ չստացավ:

15. Մինչև «Թավշյա հեղափոխությունը»՝ 2018 թ.-ի մարտի 5-ին, Սահմանադրական դատարանի նախկին նախագահ պարոն Գագիկ Հարությունյանը հրաժարական տվեց՝ 2015 թ.-ի սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելուց երեք շաբաթ և թոշակի անցնելու 70 տարին լրանալուց կարճ ժամանակ առաջ: Արդյունքում պարոն Հրայր Թովմասյանը 2018 թ.-ի մարտի 21-ին Խորհրդարանի կողմից ընտրվեց Սահմանադրական դատարանի նախագահ՝ 2005 թ.-ի Սահմանադրության դրույթների համաձայն, մինչև կենսաթոշակային 65 տարին լրանալու ժամկետով: Պարոն Թովմասյանը, ով Արդարադատության նախարար էր 2010 թ.-ի դեկտեմբերից մինչև 2013 թ.-ի սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, 2017 թ.-ի ապրիլից Հանրապետական կուսակցությունից Ազգային ժողովի պատգամավոր էր՝ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնում ընտրվելուց կարճ ժամանակ առաջ:

16. Ներկայումս Սահմանադրական դատարանի 9 դատավորներից 2-ն ընտրվել են 2015 թ.-ի դրույթներին համաձայն. պարոն Արման Դիլանյանն ընտրվել է 2018 թ.-ի սեպտեմբերի 13-ին,

⁷ CDL-AD(2015)037, պարբ. 166.

պարոն Վահե Գրիգորյանն ընտրվել է 2019 թ.-ի հունիսի 18-ին՝ 2018 թ.-ի դեկտեմբերի խորհրդարանական ընտրություններից հետո: Մյուս 7 դատավորներն ընտրվել են 2018 թ.-ի հունիսի 18-ից առաջ՝ 1995 թ.-ի և 2005 թ.-ի Սահմանադրությունների դրույթների համաձայն:

17. 2019 թ.-ի սեպտեմբերի 6-ին Արդարադատության նախարարը խնդրել է Վենետիկի Հանձնաժողովին կարծիք հայտնել «Դատական բարեփոխումների փաթեթի» վերաբերյալ: Փաթեթի փոփոխություններից մեկը վերաբերում էր Սահմանադրական դատարանի մասին օրենքին և ներդնում էր մինչև իրենց լիազորությունների ավարտը հրաժարական տալու հնարավորություն՝ ըստ ցանկության և որոշակի արտոնություններով Սահմանադրական դատարանի այն դատավորների համար, ում լիազորությունները գործում են մինչև կենսաթոշակի անցնելը: Իշխանությունները վկայակոչել են 2015 թ.-ի վերանայումով Սահմանադրության կիրարկումը հետհեղափոխական համատեքստում և նշել, որ Սահմանադրական դատարանի դատավորների ցմահ պաշտոնավարումից պետք է անհապաղ անցում կատարել ֆիքսված ժամկետով պաշտոնավարման:

18. 2019 թ.-ի հոկտեմբերին ընդունված միացյալ կարծիքում⁸ Վենետիկի հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների տնօրինությունը գտել են, որ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորները պետք է ունենան նույն կարգավիճակը՝ անկախ այն հանգամանքից՝ նշանակվել են Սահմանադրության 2015 թ.-ի վերանայումից առաջ թե՛ հետո (պարբ. 60): Նրանք նաև նշել են, որ սկզբունքորեն, եթե վաղաժամկետ կենսաթոշակի անցնելու մեխանիզմը լինի կամավոր և հետևաբար բացառի որևէ անհարկի (քաղաքական կամ անձնական) ճնշում համապատասխան դատավորների վրա, և եթե այդ մեխանիզմը նախատեսված չլինի քննվող գործերի արդյունքների վրա ազդելու նպատակով, ապա չկա այնպիսի չափանիշ, որը կստիպի Վենետիկի հանձնաժողովին դեմ լինել այդ մեխանիզմին:

19. Համապատասխան փոփոխությունները⁹ ուժի մեջ մտան 2019 թ.-ի դեկտեմբերի 11-ին և սահմանեցին 2 ամիս ժամանակ, որի ընթացքում դատավորները պետք է ընդունեին վաղաժամ թոշակի անցնելու առաջարկը: Դատավորներից ոչ մեկը չընդունեց այս առաջարկը:

20. 2020 թ. փետրվարի սկզբին իշխող մեծամասնությունը առաջարկեց սահմանադրական փոփոխություններ անցումային Հոդված 213-ին, ըստ որի 2015թ.-ի Սահմանադրության Գլուխ 7-ի ուժի մեջ մտնելուց առաջ Սահմանադրական դատարանի նշանակված նախագահի և դատավորների պաշտոնավարումը դադարում է (յոթ դատավոր՝ ներառյալ նախագահը)¹⁰: Փոփոխությունների նախնական նախագծին կից հիմնավորման մեջ մասնավորապես ասվում է, որ «ՄԴ գործող կազմի պայմաններում 2015 թ.-ի Սահմանադրության Գլուխ 7-ի դրույթներով նշանակված դատավորների և մինչ այդ նշանակված դատավորների պաշտոնավարման

⁸ CDL-AD(2019)024 Համատեղ կարծիք Դատական օրենսգրքի և որոշ այլ օրենքների փոփոխությունների վերաբերյալ՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 120-րդ լիազումար նիստում (2019 թ. հոկտեմբերի 11-12, Վենետիկ):

⁹ Հոդված 88: «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

«4. Սահմանադրության 213-րդ հոդվածով նախատեսված՝ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի անդամի և սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնն առնվազն տասներկու տարի զբաղեցրած անձին նրա լիազորությունները հրաժարականի դիմում տալու միջոցով դադարելու դեպքում, անկախ նրա՝ օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքը լրացած լինելու հանգամանքից, եթե պահպանվել են սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջները, և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման առավելագույն տարիքը լրանալու, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու դեպքում «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով նշանակվում է կենսաթոշակ»:

¹⁰ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ (P-469-05.02.2020-PI-01/0):

Ժամկետների միջև էական տարբերություն կա: Թեև նորընտիր դատավորները պաշտոնավարում են 12 տարով, նախկինում նշանակված անդամները, որոնք նշանակվել են 1995 թ.-ի Սահմանադրությամբ (ՄԴ 2 անդամ) պաշտոնավարելու են մինչև 70 տարեկանը լրանալը, իսկ 2005 թ.-ի Սահմանադրությամբ (ՄԴ 5 անդամ) նշանակվածները մինչև 65 տարեկանը լրանալը»: Ըստ հիմնավորման այս փոփոխության նպատակն է ապահովել Սահմանադրական դատարանի 2015 թ.-ի Սահմանադրության 7-րդ գլխին համապատասխան ձևավորված կազմի սահմանադրականությունը, ինչպես նաև վերացնել Սահմանադրական դատարանի կազմի նկատմամբ հանրության և իշխանության այլ ճյուղերի կողմից վստահության բացակայությունը:

21. Հոդված 168(2)-ով և 169(2)-ով Սահմանադրությունը սահմանում է, որ սահմանադրական փոփոխությունները պետք է ներկայացվեն Սահմանադրական դատարան, որպեսզի քննվի դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը¹¹ ¹²: Բացի դրանից՝ փետրվարի սկզբին պատգամավորներից մեկն առաջարկեց փոփոխություններ կատարել «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում, «Հանրաքվեի մասին» օրենքում և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում, որոնցով կվերացվեին համապատասխան դրույթները՝ նախատեսող սահմանադրական փոփոխությունների սահմանադրականության հարցով պարտադիր քննություն Սահմանադրական դատարանի կողմից՝ առանց, սակայն, փոփոխելու Սահմանադրության համապատասխան դրույթները (այսինքն՝ Հոդված 168(2) և 169(2)):

Խորհրդարանը այս օրենսդրական փոփոխությունների քվեարկություն չի իրականացրել:

22. 2020 թ.-ի փետրվարի 6-ին անցումային Հոդված 213-ի սահմանադրական փոփոխությունների նախագիծը քննարկվեց Ազգային ժողովի արտահերթ նիստի ժամանակ: Հարկ է նշել, որ Սահմանադրության Հոդված 202-ի (Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը) առաջին մասը սահմանում է մի շարք սահմանադրական դրույթներ, որոնք կարող են փոփոխվել միայն հանրաքվեի միջոցով¹³: Ըստ նույն դրույթի երկրորդ մասի՝ Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն¹³ ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Ըստ 3-րդ մասի՝ «Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի»: Ազգային ժողովի փետրվարի 6-ի արտահերթ նստաշրջանի ժամանակ թեև իշխող կուսակցությունը ուներ բավարար մեծամասնությունը՝ անմիջապես այս սահմանադրական փոփոխությունն ընդունելու համար (այսինքն՝ մեծամասնության երկու երրորդով), փոփոխության նախագիծը առաջին ընթերցմամբ չստացավ բավարար թվով ձայն, և Խորհրդարանը որոշեց սահմանադրական փոփոխությունը հանրաքվեի դնել պատգամավորների ընդհանուր թվի ձայների երեք հինգերորդով՝ ըստ Սահմանադրության Հոդված 202(3)-ի: Ըստ պատվիրակության ստացած մի շարք մեկնաբանությունների՝ իշխող մեծամասնության նպատակն էր նաև շրջանցել Սահմանադրական դատարանի կողմից նախապես կատարվելիք սահմանադրական քննությունը: Իշխող մեծամասնությունն առարկել է, որ եթե

¹¹ Հոդված 168 Սահմանադրական դատարանի լիազորությունները 2) մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը.

Հոդված 169 Սահմանադրական դատարան դիմելը

2. Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխությանը, վերաբերական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով: Քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը:

¹² Այսինքն՝ Սահմանադրության Գլուխ 1-3-ը, 7-ը, 10-ը և 15-ը, ինչպես նաև Հոդված 88-ը, Հոդված 89-ի 3-րդ մասի առաջին նախադասությունը, Հոդված 90-ի մաս 1-ը, Հոդված 103-ի մաս 2-ը, Հոդված 108-ը, 115-ը, 119-120-ը, 123-125-ը, 146-ը, 149-ը և 155-ը, ինչպես նաև Հոդված 200-ի մաս 4-ն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով:

¹³ Հետևաբար, այդ թվում նաև՝ Հոդված 213-ը:

Մահմանադրական դատարանին դիմեն՝ խնդրելով քննել Դատարանի դատավորների մանդատի վերաբերյալ փոփոխության սահմանադրականությունը, ապա կլինի շահերի բախում, և արդյունքում դա թույլ չի տա, որ այդ դատավորները քննեն սահմանադրական փոփոխությունը:

23. Ապրիլի 5-ին հանրաքվեի անցկացման մասին օրինագիծը հաստատվել է նախագահի որոշմամբ փետրվարի 9-ին, սակայն հանրաքվեն հետաձգվել է COVID-19-ի համավարակի դեմ պայքարելու նպատակով հայտարարված արտակարգ դրության պատճառով:

24. Վենետիկի հանձնաժողովը տեղեկացվել է, որ մայիսի 25-ին Ազգային ժողովի իրավական հարցերի մշտական հանձնաժողովը հաստատել է «Հանրաքվեի մասին» օրենքում, «Մահմանադրական դատարանի մասին» օրենքում և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում մի շարք նոր փոփոխությունների նախագիծ: Փոփոխությունների նախագծերը մասնավորապես Ազգային ժողովին տալիս են լիազորություն չեղյալ հայտարարելու արդեն իսկ նշանակված հանրաքվեն (սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ), որը հետաձգվել է ռազմական դրության կամ արտակարգ դրության պատճառով: Ավելին՝ Մահմանադրական դատարանի կողմից սահմանադրական փոփոխությունների վերանայման ծավալը կսահմանափակվի Մահմանադրության փոփոխման ոչ ենթակա դրույթների հետ սահմանադրական փոփոխությունների համապատասխանության հսկողությամբ¹⁴: Բացի դրանից՝ Մահմանադրական դատարանը պետք է այս քննությունը պարտադիր իրականացնի դիմումը ներկայացնելուց հետո տասնհինգ օրվա ընթացքում: 2020 թ.-ի հունիսի 3-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց «Հանրաքվեի մասին» օրենքում փոփոխությունները:

III. Իշխանությունների հատուկ հարցեր և բացատրություններ

25. Հաշվի առնելով նախկինում արդեն իսկ նկարագրված իրավական համատեքստը՝ հարցերին կից ներկայացված տեղեկատվական փաստաթղթում (CDL-REF(2020)025) իշխանությունները եզրակացնում են, որ ներկայիս Մահմանադրության անցումային դույթները որևէ կերպ չեն ապահովել Մահմանադրական դատարանի ձևավորման նոր մոդելը, որը դեռևս ամբողջովին կյանքի չի կոչվել: Իշխանությունների համար Մահմանադրական դատարանի ճգնաժամի առանցքային խնդիրն այն է, որ Մահմանադրական դատարանի՝ մինչև Մահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելը և դրանից հետո նշանակված նախագահը և դատավորները ակնհայտ տարբեր կարգավիճակներ ունեն նշանակման կարգի, նշանակող մարմինների և նրանց պաշտոնավարման ժամկետների առումով: Դիտարկելով, որ Մահմանադրության փոփոխությունների ընդունումից 5 տարի հետո Դատարանի միայն երկու դատավոր է նոր ընթացակարգով ընտրվել, նրանք եկել են այն եզրակացության, որ անցումային դրույթների կիրարկման եղանակը ունեցել է այնպիսի ազդեցություն, որի արդյունքում Դատարանի կազմի վերաբերյալ դրույթների լիարժեք իրագործումը բացառիկ երկար ժամկետով հետաձգվել է:

26. Հետևաբար՝ իշխանությունները Վենետիկի հանձնաժողովին խնդրում են կարծիք հայտնել հետևյալ հարցերի և բացատրությունների վերաբերյալ.

- 1. *Ներկա իրավիճակում ո՞րն է լավագույն եղանակը՝ ամբողջությամբ կյանքի կոչելու Մահմանադրությամբ (2015 թ.-ի փոփոխություններով) սահմանված Մահմանադրական դատարանի նոր մոդելը:*

Հնարավոր տարբերակներից մեկը կարող է լինել հետևյալը. կիրառել փոփոխված Մահմանադրությունը Մահմանադրական դատարանի անդամների նկատմամբ, ովքեր ընտրվել են մինչև նոր Մահմանադրության ընդունումը: Մասնավորապես՝ Դատարանի այն անդամները, որոնք մինչև նոր Մահմանադրության 7-րդ գլխի (Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը) ուժի մեջ մտնելու պահը (2018 թ.-ի ապրիլի 9) պաշտոնավարել են 12 տարի, կավարտեն իրենց պաշտոնավարումը, իսկ այն անդամները, ովքեր չեն լրացրել իրենց

¹⁴ Համաձայն Մահմանադրության Հոդված 203-ի՝ «Մահմանադրության Հոդված 1-ը, 2-ը, 3-ը և 203-ը փոփոխման ենթակա չեն»:

պաշտոնավարման 12 տարին, կշարունակեն պաշտոնավարել համապատասխանաբար մինչև իրենց պաշտոնավարման 12 տարին լրանալը:

Ինչ վերաբերում է Դատարանի նախագահին, նրա՝ որպես նախագահի մանդատը պետք է դադարի գործել, և նրա գործընկերները պետք է ընտրեն նոր նախագահ՝ 6 տարի ժամկետով՝ առանց վերստին ընտրվելու իրավունքի՝ նոր Սահմանադրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան: Այս լուծումը կհամապատասխանի այն տրամաբանությանը, ըստ որի՝ նոր Սահմանադրությամբ (Հոդված 215) Սահմանադրական դատարանի նախագահի, ինչպես նաև սովորական դատարանների նախագահների համար սահմանվել է կարճ ժամկետով պաշտոնավարում:

Սա կարող է ապահովվել Սահմանադրության անցումային դրույթները (Հոդված 213) փոփոխելու միջոցով՝ հաշվի առնելով, որ այս դրույթները նախատեսված են ապահովել Սահմանադրության փոփոխությունների արագ և ամբողջական իրագործումը:

- 2. Եվրոպական լավագույն չափանիշների տեսանկյունից արդյո՞ք ընդունելի կլինի, եթե Դատարանի լիազորությունների շրջանակի փոփոխությունները սահմանափակվեն փոփոխման ոչ ենթակա սահմանադրական հոդվածների հետ համապատասխանության նախնական սահմանադրական քննությամբ, և եթե դրա համար սահմանվի հարաբերականորեն կարճ ժամկետ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը չի նախատեսում Դատարանի քննության հստակ շրջանակ սահմանադրական փոփոխությունների դեպքում, ինչն ակնհայտորեն առաջացնում է շատ անորոշություն: Իրավական որոշակիություն ապահովելու նպատակով նախ կարելի է Դատարանի քննության շրջանակը սահմանել որպես հնարավորինս սեղմ ժամկետում (օրինակ՝ 10 օր) իրականացվող քննություն, որի նպատակն է ապահովել Սահմանադրության փոփոխման ոչ ենթակա հոդվածներին համապատասխանությունը:

Եվ երկրորդ՝ Դատարանի քննության համար սահմանված շրջանակը Խորհրդարանին հնարավորություն կտա հստակ դիրքորոշում ունենալ Սահմանադրության փոփոխությունները քվեարկելիս՝ առաջարկվող փոփոխությունների մասին Դատարանի եզրակացությունը ստանալուց հետո:

- 3. Արդյո՞ք Ազգային ժողովը չպետք է ունենա լիազորություն՝ չեղարկելու ավելի վաղ նշանակված հանրաքվեն, որը կասեցվել է համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության հետևանքով:

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է, որ նշանակված, սակայն արտակարգ դրության պատճառով չանցկացված հանրաքվեն անցկացվում է արտակարգ դրության ավարտից հետո: Օրենքը չի սահմանում հնարավորություն չեղարկելու մինչև արտակարգ դրությունը հայտարարված հանրաքվեն:

Մենք իսկապես կարծում ենք, որ հանուն հանրային առողջության և անվտանգության, Խորհրդարանը պետք է ունենա լիազորություն՝ չեղյալ հայտարարելու ավելի վաղ հայտարարված, սակայն հետագայում համավարակի պատճառով առաջացած արտակարգ դրության հետևանքով կասեցված հանրաքվեն անցկացնելու մասին իր որոշումը»:

IV. Վերլուծություն

Ա. Առաջին հարց. Ներկա իրավիճակում ո՞րն է լավագույն եղանակը՝ ամբողջությամբ կյանքի կոչելու Սահմանադրությամբ (2015 թ.-ի փոփոխություններով) սահմանված Սահմանադրական դատարանի նոր մոդելը:

1. Կիրառելի միջազգային չափանիշներ և նախկին կարծիքներ

27. Առաջին հարցի գնահատման ուղենիշային սկզբունքներն են դատարանների և դրանց անդամների անկախությունը, դատավորների միջև ցանկացած անհարկի աստիճանակարգությունից կամ անհավասարությունից խուսափելը և հաստատության հանդեպ վստահությունը:

28. Վենետիկի հանձնաժողովը նախկինում բազմիցս քննադատել է դատավորների կենսաթոշակային տարիքի կամ պաշտոնավարման ժամկետների փոփոխությունները նույնիսկ եթե այդ փոփոխությունը հանդիսացել է դատական իշխանության ընդհանուր բարեփոխման մաս, և հատկապես, եթե այդ փոփոխությունները կատարվել են շտապողականությամբ և առանց համոզիչ հիմնավորման:¹⁵ Դատավորների կենսաթոշակային տարիքի կամ պաշտոնավարման ժամկետի՝ հետադարձ ուժ ունեցող փոփոխություններն ազդում են դատավորների անկախության վրա և, կախված ազդակիր դատավորների թվից, այդ փոփոխությունները կարող են նաև բացասական ազդեցություն ունենալ դատարանի արդյունավետության վրա: Այդ իսկ պատճառով էլ դատավորների անկախության միջազգային չափանիշներով հստակ երաշխավորվում է պաշտոնավարման ժամկետի ապահովությունը մինչև պարտադիր կենսաթոշակային տարիքը կամ պաշտոնավարման ժամկետի ավարտը և, մինչև ժամանակ, սահմանափակվում են անգործունակության կամ մասնագիտական ոչ պատշաճ վարքի հետևանքով պաշտոնից ազատման հիմքերը¹⁶: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) բազմիցս ընդգծել է դատավորների պաշտոնավարման ժամկետների և նրանց անկախության միջև կապը¹⁷: Եվ իսկապես, դատավորների պաշտոնավարման երաշխավորվածությունը համընդհանուր ընդունված սկզբունք է բոլոր այն երկրներում, որտեղ հարգում են իրավունքի գերակայությունը, և դրանց բացառությունների համար անհրաժեշտ են համոզիչ պատճառներ¹⁸: Բական ընդդեմ Հունգարիայի գործում ՄԻԵԴ-ն անդրադարձել է դատավորների պաշտոնավարման ժամկետի հետադարձ ուժով կրճատման հարցին.

«Ավելին, թեև դիմումատուն շարունակել է պաշտոնավարել որպես դատավոր և նոր *Կուրիայի* քաղաքացիական բաժանմունքի նախագահ, նրան հեռացրել են Գերագույն դատարանի նախագահի պաշտոնից իր ընտրության պահին գործող օրենսդրության համաձայն կիրառելի ֆիքսված ժամկետի ավարտից երեքուկես տարի առաջ: Սա դժվար թե համատեղելի լինի այն հատուկ ուշադրության հետ, որն անհրաժեշտ է ցուցաբերել դատական գործառնությունների բնույթի որպես պետական իշխանության անկախ ճյուղի, ինչպես նաև դատավորների անփոփոխելիության սկզբունքի նկատմամբ, որը դատավորների անկախության պահպանման առանցքային տարր է համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի և միջազգային ու Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի [...]»¹⁹

29. Եվ այս համատեքստում 2019 թ.-ի հոկտեմբերի իր կարծիքում Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է կապը դատական անկախության և պաշտոնավարման երաշխավորվածության միջև.

«Վենետիկի հանձնաժողովը ցանկանում է ընգծել, որ Սահմանադրական դատարանների դատավորների պաշտոնավարման ժամկետի երաշխավորվածությունը կարևոր երաշխիք է նրանց անկախության համար: Անփոփոխելիությունը նախատեսված է պաշտպանելու Սահմանադրական դատարանի դատավորներին ներկայիս քաղաքական մեծամասնության ազդեցությունից: Անընդունելի կլիներ, եթե յուրաքանչյուր նոր կառավարություն իր

¹⁵ Տես CDL-AD(2012)001, Կարծիք «Դատավորների իրավական կարգավիճակի և վարձատրության մասին» 2011 թ. CLXII օրենքի և «Հունգարիայի դատարանների կազմակերպման և կառավարման մասին» 2011 թ. CLXI օրենքի վերաբերյալ, պարբ. 102-110-ը, CDL- AD(2017)031, Կարծիք «Դատական իշխանության ազգային խորհրդի մասին» օրենքը փոփոխող ակտի նախագծի, Լեհաստանի նախագահի առաջարկած «Գերագույն դատարանի մասին» օրենքը փոփոխող ակտի նախագծի և «Սովորական դատարանների կազմակերպման մասին» օրենքի վերաբերյալ, պարբ. 44-52-ը :

¹⁶ Տես ՄԱԿ-ի 1985 թ. Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները, Հոդված 12-ը, 18-ը և 20-ը, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի Հոդված 14-ի վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություն թիվ 32, պարբ. 19-20-րդ, «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թ. Եվրոպական խարտիա, պարբ. 7.1, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի CM/Rec (2010)12 հանձնարարական, պարբ. 49-50-րդ, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կարծիք թիվ 1 (2001), պարբ. 57-րդ և 59-րդ, CDL-AD(2016)007, Օրենքի գերակայության ստուգաթերթ, E.1.a.ii:

¹⁷ Տե՛ս Քեմփբելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության , թիվ 7819/77, 7878/77, պարբ. 80-րդ, Ֆրունին ընդդեմ Սլովակիայի, թիվ 8014/07, պարբ. 145, Հենրիկ Ուրբանը և Ռիչարդ Ուրբանն ընդդեմ Լեհաստանի , թիվ 23614/08, պարբ. 53-րդ :

¹⁸ Համոզիչ աղբյուրի համար տես Եվրոպական միության արդարադատության դատարանի մեծ պալատի C-619/18 գործով 2019 թ. հունիսի 24-ին կայացված վճիռը, պարբ. 75-79:

¹⁹ *Բական ընդդեմ Հունգարիայի*, 20261/12, պարբ. 172:

հայեցողությամբ կարողանար փոխել գործող դատավորներին՝ նշանակված նոր դատավորներով»²⁰:

30. Այդ կարծիքում պարզ նշվում է, թե որն է դատավորների անփոփոխելիության նպատակը. դատավորները, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորները, չպետք է փոխարինվեն, երբ նոր կառավարություն է գալիս իշխանության: Նախկին կառավարության ժամանակ նշանակված լինելը պարզապես համոզիչ պատճառ չէ դատավորին փոխարինելու համար:

31. Իր վերջին կարծիքներում Վենետիկի հանձնաժողովը շեշտել է դատական համակարգի կայունության կարևորությունը դրա անկախության տեսանկյունից ²¹ : Դատական իշխանության նկատմամբ վստահությունը պահանջում է կայուն իրավական շրջանակ, և թեև երբեմն պահանջվում են դատական բարեփոխումներ, որպեսզի բարձրանա դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության մակարդակը, «շարունակական ինստիտուցիոնալ անկայունությունն այն պայմաններում, երբ քաղաքական իշխանության փոփոխություններին հաջորդում են բարեփոխումներ, նույնպես կարող է վնասակար լինել դատական իշխանության՝ որպես անկախ և անաչառ կառույցի նկատմամբ հանրային վստահության համար»²²:

2. Անցումային 213-րդ հոդվածում առաջարկվող

փոփոխությունները

ա. Սահմանադրական դատարանի դատավորների

վերաբերյալ

32. Վերջին 25 տարիների ընթացքում Հայաստանում տեղի ունեցող սահմանադրական զարգացման գործընթացը ցույց է տալիս շարունակական պայքար ժողովրդավարական չափանիշների բարելավման և իրավունքի գերակայության խթանման համար: Այդ գործընթացին զուգընթաց Վենետիկի հանձնաժողովը պարբերաբար առաջարկություններ է տրամադրել, և այդ ընթացքը գերծ չի եղել քաղաքական բախումներից: Այս գործընթացում գործող դատավորների անկախության հետ կապված մտահոգությունը շատ ընդգծված էր:

33. Իրապես Սահմանադրության 2015 թ.-ի փոփոխություններով ներդրված 7-րդ գլուխը (Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը) ներառում է մի շարք դրույթներ, որոնք համարվում են, որ սահմանում են իրավունքի գերակայությամբ ղեկավարվող ժողովրդավարական համակարգում հնարավոր անկախության և անաչառության ամենաբարձր մակարդակը՝ մասնավորապես դատավորների կարգավիճակի և ընտրության ու նշանակման ընթացակարգի առնչությամբ (մասնավորապես՝ 164-167-րդ հոդվածներ):

34. Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորներին, Խորհրդարանի կողմից նրանց ընտրության համար ընդհանուր ձայների առնվազն երեք հինգերորդի որակյալ մեծամասնության նոր պահանջի սահմանումը նպատակ ունի ապահովելու,

²⁰ CDL-AD(2019)024, պարբ. 58:

²¹ Տես CDL-AD(2019)027, Ուկրաինա. Կարծիք Գերագույն դատարանը և դատական կառավարման մարմինները ղեկավարող իրավական շրջանակի վերաբերյալ, պարբ. 13-16, CDL-AD(2019)014, Ռումինիա. Կարծիք Կառավարության արդարադատության ոլորտի օրենքները փոփոխող ԿԱՀ թիվ 7 և ԿԱՀ թիվ 12 արտակարգ հրամանների վերաբերյալ, պարբ. 14:

²² CDL-AD(2019)027, Ուկրաինա. Կարծիք Գերագույն դատարանը և դատական կառավարման մարմինները ղեկավարող իրավական դաշտի վերաբերյալ, պարբ. 13: Տես նաև CCJE - BU(2017)11, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԴԽ) բյուրո, Ձեկույց 2017 թ. Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դատական անկախության և անաչառության վերաբերյալ, պարբ. 7. «Դատավորների նկատմամբ հանրային վստահությունը կարող է վնասվել ոչ միայն իրական, առկա և համոզիչ ձևով պարզված խախտումների դեպքում, այլ նաև եթե կան բավարար պատճառներ կասկածի տակ դնելու դատավորների անկախությունը և անաչառությունը»:

որ իշխող մեծամասնությունը չգտնվի այնպիսի դիրքում, որ հսկի նշանակումները: Այն այսպիսով պաշտպանում է Սահմանադրական դատարանի դատավորներին քաղաքական մեծամասնության ազդեցությունից: Բացի դրանից՝ վերընտրվելու հնարավորության բացառումը (նոր Հոդված 166 (1)) անկասկած նպաստում է դատավորների անկախությանը: Թեև կան այնպիսի համակարգեր, որոնցով նախատեսվում է դատավորների վերընտրվելու հնարավորություն, ինչպես Լիխտենշտեյնի Սահմանադրական դատարանի (*Staatsgerichtshof*) դեպքում (Լիխտենշտեյնի սահմանադրության Հոդված 105՝ հղում կատարելով Հոդված 102 (2)-ին) կամ Եվրոպական միության արդարադատության դատարանի դեպքում, եվրոպական չափանիշն այն է, որ Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետները չեն կարող նորացվել, իսկ վերընտրվելու հնարավորությունը բացառվում է:

35. Մյուս կողմից՝ պաշտոնավարման ժամկետների սահմանափակումները հաճախ են հանդիպում բազմաթիվ սահմանադրական համակարգերում՝ այնքանով, որքանով վերաբերում են Սահմանադրական դատարանի դատավորներին (ի տարբերություն քաղաքացիական և քրեական դատարանների սովորական դատավորների, որտեղ դատավորի պաշտոնավարումը սահմանափակվում է միայն կենսաթոշակային տարիքով): Տասներկու տարի ժամկետը լիովին համապատասխանում է եվրոպական չափանիշներին: Անկասկած, այդպիսի սահմանափակ ժամկետը Դատարանի կազմի պարբերական և մասնակի թարմացման հնարավորություն է ստեղծում՝ ներկայացվածության առումով բազմատարրության և բազմակարծության աստիճանի և ավելի բարձր հավասարակշռվածության հասնելու նպատակով: Այն փոփոխվող խորհրդարանական մեծամասնությունը հնարավորություն է տալիս ընտրելու մեկ այս կամ այն տեղեկնից հարող դատավորներ և ավելի լավ արտացոլել հասարակության փոփոխվող քաղաքական և հասարակական տեսակետները:
36. Հայաստանի լայնածավալ և դրական զարգացումներին զուգահեռ, 2015 թ.-ի փոփոխությունները երաշխավորեցին Սահմանադրական դատարանի գործող դատավորների պաշտոնավարման ժամկետը՝ պահպանելով նրանց նշանակման սկզբնական ժամկետները: Հետևաբար՝ դրանով երաշխավորվում էր այդ դատավորների պաշտոնավարման շարունակականությունը մինչև նրանց կենսաթոշակային տարիքին հասնելը՝ առանց նրանց մանդատը նոր ներդրված (անցումային Հոդված 213) տասներկուամյա ժամկետով սահմանափակելու: Հետևաբար՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրական դատարանի բարեփոխման և ֆիքսված ժամկետի ներդրման արդյունքում Սահմանադրական դատարանի դատավորները իրենց պաշտոնից անմիջապես և կտրուկ չազատվեցին:
37. Անցումային Հոդված 213-ի դրույթը 2015 թ.-ի փոփոխություններով ներդրված նորույթ չէ, և ոչ էլ բացառիկ բնույթ ունի: Նման անցումային դրույթ եղել է նաև 2005 թ.-ի Սահմանադրության մեջ (Հոդված 117(13)), որն, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման եղանակը էականորեն չի փոխել²³: Ավելին, 2015 թ.-ի Սահմանադրության անցումային Հոդված 215-ը²⁴ նույն երաշխիքը նախատեսում է նաև սովորական դատավորների համար (սակայն ոչ՝ նախագահների), որոնք նշանակվել են մինչև 7-րդ գլուխն ուժի մեջ մտնելը, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատավորների համար, որոնց նշանակման ընթացակարգը համապատասխան փոփոխությունների արդյունքում կարևոր փոփոխությունների է ենթարկվել, սակայն նրանց պաշտոնավարման ժամկետը (մինչև կենսաթոշակի

²³ Հոդված 117(13). Սահմանադրական դատարանի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց 70 տարին լրանալը:

²⁴ Հոդված 215(1). «Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատավորները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը»:

անցնելը մնացել է նույնը²⁵:

- 38. Թեև Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման սահմանափակ ժամկետի ներդնումը չի կարող բացառվել և, հակառակը, խրախուսելի է, Հանձնաժողովը գտնում է, որ սկզբունքորեն պատշաճ է Դատարանի կազմում աստիճանաբար փոփոխություն կատարելու հնարավորություն ստեղծող անցումային ժամկետը, որը կկանխի, որ այդ սահմանափակումն օգտագործվի որպես քաղաքական մեծամասնության տրամադրության տակ գտնվող գործիք՝ Դատարանի կազմը փոխելու համար կամ ընկալվի որպես այդպիսի գործիք: Այդպիսի անցումային միջոցը ծառայում է ցրելու այն գաղափարը, որ դատավորների պաշտոնավարման ժամկետի սահմանափակումը փաստորեն կապված է այդ դատավորների կողմից իրենց այն պաշտոնեական պարտականությունների համատեքստում կատարված գործողությունների հետ, որոնց իշխող մեծամասնությունը հավանություն չի տալիս: Ավելին՝ դատավորների լիազորությունների ֆիքսված ժամկետի ներդնումը առանց անցումային ժամանակահատվածի, որը պաշտպանում է իրենց պաշտոնավարման ժամկետի հանդեպ վստահությունը, ինչի արդյունքում նրանք անմիջապես հեռացվում են պաշտոնից, չի համապատասխանում դատավորների անփոփոխելիության սկզբունքին:
- 39. Վենետիկի հանձնաժողովի համար դատավորների անփոփոխելիությունը դատական իշխանության անկախության կարևոր տարր է: Հաշվի առնելով դատավորների պաշտոնավարման ժամկետի երաշխիքին տրվող կարևորությունն ինչպես պարտադիր բնույթի, այնպես էլ «փափուկ իրավունքի» միջազգային չափանիշների համատեքստում, և մասնավորապես հաշվի առնելով դատական իշխանության, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի անկախությունը պաշտպանելու մեծացող կարևորությունը, պատշաճ կլինի, որ այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման և պաշտոնավարման ժամկետների վերաբերյալ սահմանադրական դրույթները փոփոխվեն՝ պաշտոնավարման ժամկետի ցանկացած կրճատում կիրառվի միայն այն դատավորների դեպքում, ովքեր նշանակվելու են, երբ նոր դրույթներն արդեն ուժի մեջ մտած լինեն: Հետևաբար՝ Հոդված 213-ը համապատասխանում է միջազգային չափանիշներին, իսկ սահմանված անցումային կարգավորումներից ցանկացած շեղում պետք է քննվի ծայրահեղ զգուշությամբ:
- 40. Ի սկզբանե 2020 թ.-ի ապրիլի 5-ին հանրաքվեի դրված Սահմանադրության անցումային Հոդված 213-ում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը նախատեսում էր պաշտոնից ազատել բոլոր այն 7 դատավորներին (այդ թվում՝ նախագահին), որոնք նշանակվել էին մինչև 2015 թ.-ի փոփոխությունների ուժի մեջ մտնելը՝ 2018 թ.-ի ապրիլի 9-ին, ինչպես նաև այն դատավորներին, որոնց պաշտոնավարման տասներկուամյա ժամկետը դեռ ամբողջությամբ չէր լրացել՝ 2015 թվականի փոփոխությունների համաձայն: Առանց անցումային կարգավորումների նման բնույթի միջոցառումները հակասում են ՄԻԵԴ-ի Հոդված 6-ին (տես Բական ընդդեմ Հունգարիայի): Հետևաբար՝ Հանձնաժողովը ողջունում է, որ դիմումով առաջարկվող մոտեցումը չի հանգեցնում նրան, որ ինքնաբերաբար և անհետևողական ձևով պաշտոնից ազատվեն այն բոլոր դատավորները, ովքեր նշանակվել են մինչև 2015 թ.-ի փոփոխություններն ուժի մեջ մտնելը:
- 41. Իշխանությունների կողմից ներկայացված սույն դիմումի մեջ առաջարկվում է փաստացի այլ և ավելի քիչ միջամտող մոտեցում: Հետևաբար՝ Հոդված 213-ի փոփոխությամբ 2015 թվականին ներդրված պաշտոնավարման նոր ժամկետը (տասներկու տարի) կարող է ուժի մեջ մտնել բոլոր դատավորների համար՝ այդ թվում

²⁵ Մինչ մինչև 2015 թ. փոփոխությունները Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում էր Հանրապետության նախագահը Արդարադատության խորհրդի առաջարկությամբ (Հոդված 55(11)), 2015 թ. փոփոխություններից հետո նրանք նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից՝ Ազգային ժողովի առաջարկությամբ, որը թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից (Հոդված 166(3)):

նան այն դատավորների, որոնք նշանակվել են մինչև 2015 թ.-ի փոփոխությունների ուժի մեջ մտնելը: Սա կնշանակի, որ այն դատավորներն, ում պաշտոնավարման 12-րդ տարին լրացել է, կազատվեն պաշտոնից, մինչդեռ մինչև 2018 թ.-ի ապրիլի 9-ը նշանակված այն դատավորները, ում պաշտոնավարման տասներկու տարին չի լրացել, կշարունակեն պաշտոնավարել մինչև պաշտոնավարման 12 տարին ամբողջությամբ լրանալը: Գործող երկու դատավորներ պաշտոնավարում են արդեն ավելի քան տասներկու տարի, դատավորներից մեկը պաշտոնավարում է երկրորդ ժամկետը, սակայն այս երկրորդ ժամկետի տասներկու տարվա սահմանափակումը դեռևս չի լրացել:

42. Իշխանություններն իրենց դիմումի մեջ և պատվիրակության հետ ունեցած հանդիպումների ընթացքում նման մոտեցման օգտին ներկայացրել են մի շարք փաստարկներ. նախ անցումային փուլում անցումային դրույթները որևէ ձևով չեն ապահովում Սահմանադրական դատարանի ձևավորման նոր մոդելը: Արդյունքում գործող Սահմանադրությամբ նախատեսված նոր մոդելը դեռևս լիարժեք կյանքի չի կոչվել: Փոփոխություններն ընդունվել են 2015 թ.-ին և ուժի մեջ մտել 2018 թ.-ին: Մինչդեռ անցումային Հոդված 213-ի համաձայն՝ դրանց վերջնական իրականացումը հնարավոր կլինի միայն չափազանց երկար ժամանակահատվածից հետո, քանի որ գործող նախագահի կենսաթոշակի անցնելու տարիքը կլրանա 2035 թ.-ին, իսկ մեկ այլ անդամինը՝ 2037 թ.-ին, այսինքն՝ փոփոխություններն ընդունելուց ավելի քան 20 տարի հետո:
43. Ըստ իշխանությունների՝ մեկ այլ խնդիր մինչև 2015 թ. փոփոխություններն ուժի մեջ մտնելը նշանակված դատավորների և դրանից հետո ընտրված կամ ընտրվելիք դատավորների կարգավիճակների միջև ակնհայտ տարբերությունն է՝ նրանց նշանակման կարգի, նշանակող մարմինների և պաշտոնավարման ժամկետների համատեքստում: Այս հանգամանքի հետ կապված՝ իշխանություններն ընդգծել են, որ ներկայումս Սահմանադրական դատարանում կան երեք տարբեր կատեգորիաների դատավորներ. ըստ 1995 թ.-ի Սահմանադրության նշանակված դատավորներ, որոնք կարող են պաշտոնավարել մինչև յոթանասուն տարին լրանալը, 2005 թ.-ի փոփոխություններից հետո նշանակված դատավորներ, որոնք դատարանում կաշտոնավարեն մինչև վաթսուհինգ տարին լրանալը, և 2015 թ.-ի փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո նշանակված դատավորներ, որոնք կարող են պաշտոնավարել ընդհանուր տասներկու տարի: Իշխանությունների համար դատավորների կարգավիճակների միջև այս տարբերության վառ օրինակ է այն փաստը, որ ըստ գործող Սահմանադրության կանոնների նորընտիր դատավորները (ընդհանուր թվով 2 դատավոր) իրենց տասներկուամյա պաշտոնավարման ընթացքում չեն կարողանա առաջադրվել Դատարանի նախագահի պաշտոնը ստանձնելու համար:
44. Իշխանություններն ընդգծում են, որ Սահմանադրական դատարանի նկատմամբ հասարակության անվստահությունը վերացնելու համար, ինչն անհետաձգելի անհրաժեշտություն է Հայաստանում, այս կառույցի կազմը պետք է հնարավորինս շուտ արտացոլի գործող դրույթները, որոնք երաշխավորում են բարձր չափանիշներ Սահմանադրական դատարանի անկախության համար: Նրանք նաև շեշտում են, որ Սահմանադրական դատարանի շուրջ գոյություն ունեցող ճգնաժամը լուրջ մարտահրավերներ է առաջացնում «Սահմանադրությամբ երաշխավորված ժողովրդավարության և իրավական պետության համար բավարար որակների» ապահովման համար:
45. Վենետիկի հանձնաժողովը վերահաստատում է, որ 2015 թ. փոփոխություններով ներդրված Սահմանադրության 7-րդ գլուխը նպատակ ունի օրենքի գերակայությամբ կառավարվող ժողովրդավարական համակարգում անկախության և անկողմնակալության հնարավոր ամենաբարձր մակարդակը հաստատել՝ մասնավորապես Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակի և ընտրության կարգի առումով: Խորհրդարանում ընդհանուր թվի որակյալ երեք հինգերորդ մեծամասնությամբ դատավորների ընտրության պահանջը, և նրանց վերստին ընտրվելու հնարավորության բացառումը, անկասկած, կարևոր երաշխիքներ

են, որոնք երաշխավորում են Սահմանադրական դատարանի դատավորների անկախությունը: Մասնավորապես, այդ երաշխիքները միտված են ապահովելու, որ տվյալ պահին իշխող մեծամասնությունը հնարավորություն չունենա վերահսկել նշանակումները և արդյունքում չունենա Սահմանադրական դատարանի կազմի հարցերով վերջնական իրավասություն:

- 46. Ինչպես նախկինում նշվել է, սահմանադրական դատավորների պաշտոնավարման սահմանափակ ժամկետի ներդրումը նույնպես լիովին համահունչ է եվրոպական չափանիշներին, քանի որ դրանով Դատարանում ստեղծվում է առավել հավասարակշռված ներկայացուցչություն:
- 47. Հարկ է նաև դիտարկել, որ ներկայիս իշխող մեծամասնության նպատակը այս բարձր ժողովրդավարական չափանիշները փոխելը չէ՝ հակադարձելով և նահանջելով 2015 թ. բարեփոխումների ձեռքբերումներից, և այնպիսի կանոններ ներդնելով, որոնք թույլ կտան մեծամասնությանը վերահսկել նշանակումները: Ընդհակառակը, տպավորություն է ստեղծվում, որ իշխանությունների նպատակն է ապահովել, որ նոր դրույթներն իրապես գործեն, և Դատարանի կազմը արտացոլի այդ դրույթներով ներդրվող ժողովրդավարական չափանիշները որքան հնարավոր է շուտ: Սա լեզբիտիմ նպատակ է:
- 48. Հանձնաժողովն ընդունում է, որ տվյալ համատեքստում փոփոխությունների ընդունման և դրանց վերջնական իրագործման միջև ժամանակահատվածը, որը կարող է լինել մինչև 20 տարի, անսովոր և չափազանց երկար ժամանակահատված է, ինչը արդյունավետորեն կհանգեցնի նրան, որ 2015 թ. փոփոխությունների իրագործումը խափանվի: Ավելին, այն ընդունում է օրինաչափությունը իշխանությունների ցանկության՝ ապահովելու Դատարանի գործող դատավորների կարգավիճակի հավասարությունը՝ մասնավորապես նրանց պաշտոնավարման ժամկետների մասով, ինչպես նաև շտկելու ստեղծված իրավիճակի հետևանքով կարգավիճակի հետ կապված ցանկացած այլ անհավասարություններ: Հանձնաժողովն ուշադրություն է հրավիրում 2019 թ. իր կարծիքի վրա, որում այն նախապատվություն է տվել այնպիսի համակարգի, որտեղ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորները օգտվում են հավասար կարգավիճակից՝ անկախ նշանակման ժամանակից²⁶:
- 49. Մույն դիմումով առաջարկված փոփոխություններով առաջարկվում է սահմանել հստակ ժամկետ գործող դատավորների պաշտոնավարուման համար՝ հետևաբար նրանց ցմահ մանդատը սահմանափակելով կենսաթոշակային տարիքի ժամկետով: Հանձնաժողովը գտնում է, որ արդեն իսկ ֆիքսված ժամկետով մանդատի կրճատմանը նպաստող միջոցի համեմատ, առաջարկված այս տարբերակում դատավորների անփոփոխելիության սկզբունքին միջամտության չափն ավելի քիչ է, ինչը պետք է հաշվի առնել:
- 50. Ավելին՝ առաջարկվող միջոցը նպատակ ունի ստանդարտացնելու դատավորների պաշտոնավարման ժամկետները՝ Սահմանադրական դատարանի ընդհանուր բարեփոխուման հիման վրա, և սահմանել մեկ ընդհանուր կանոն բոլոր դատավորների համար՝ 2015 թ. փոփոխություններն ուժի մեջ մտնելու հետ կապված՝ դատավորներին պաշտոնից կտրուկ ազատելու փոխարեն, ինչպես առաջարկված էր ի սկզբանե:
- 51. Հետևաբար՝ Հայաստանի իշխանությունների կողմից առաջարկված նոր մոտեցման համար կան հիմնավոր փաստարկներ:
- 52. Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, ցանկացած միջամտություն դատավորների անփոփոխելիության սկզբունքին մտում է ծայրահեղ խնդրահարույց և պետք է խստորեն սահմանափակվի: Անհրաժեշտ է գտնել այնպիսի լուծում, որը հնարավոր չափով կհաշտեցնի հակադրված շահերը: Այս առումով Հանձնաժողովը, մասնավորապես, հաշվի է առնում, որ 2015 թվականի բարեփոխումները ներդրած բոլոր ժողովրդավարական երաշխիքներով, թույլ չի տալիս իշխող մեծամասնությանը վերահսկել Դատարանին: Հանձնաժողովը նաև նշում է, որ Հայաստանում կա

²⁶ CDL-AD(2019)024, պարբ. 60:

օրինաչափ անհրաժեշտություն՝ կյանքի կոչելու նոր սահմանադրական դրույթները՝ առանց չափազանցված և ոչ ողջամիտ հետաձգումների:

53. Հանձնաժողովը վերահաստատում է, որ Սահմանադրական դատարանի նոր մոդելը կյանքի կոչելու պատշաճ տարբերակն է հետևյալը. պահպանել գործող դատավորների պաշտոնավարման ժամկետը և աստիճանաբար ներդնել պաշտոնավարման նոր ժամկետներ՝ նորմալ փոխարինման միջոցով: Այնամենայնիվ, հաշվի առնելով Հայաստանում ներկայիս հանգամանքները, հնարավոր լուծում կարող է լինել փոփոխել Հոդված 213-ը և թարմացնել Սահմանադրական դատարանը նախատեսված անցումային ժամանակաշրջան: Անցումային ժամանակաշրջանը հնարավորություն կտա աստիճանական փոփոխություն կատարելու Դատարանի կազմում, որպեսզի շրջանցվի այս կառույցի անկախության կտրուկ և անմիջական միջամտությունը: Իշխանությունները լավագույն դիրքում են՝ գնահատելու նշված անցումային ժամանակաշրջանի տևողությունը, և Հանձնաժողովն իրավասու չէ առաջարկելու որևէ հստակ ժամկետ: Այս ժամանակաշրջանի տևողությունը որոշելու համար անհրաժեշտ է հավասարակշռել մրցակցող երկու հանրային շահ. մի կողմից՝ յուրաքանչյուր դատավորի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի տեսանկյունից անհրաժեշտ է նվազագույնի հասցնել անցումային ժամանակաշրջանի տևողությունը, որպեսզի արդյունքում չառաջանա դատավորների անփոփոխելիության սկզբունքի անհամաչափ միջամտություն, և մյուս կողմից, դրված նպատակի սահմաններն անցնող ոչ ողջամիտ և անհամաչափ երկար անցումային ժամանակաշրջանը կարող է խոչընդոտել սահմանադրի կամքի իրագործմանը, որն արտահայտվել է 2015 թ. փոփոխությունների ընթացքում: Հետևաբար կարևոր է հնարավոր դարձնել փոփոխությունների աստիճանաբար իրականացումը որոշակի ժամանակահատվածում, որի տևողությունը հաշվի է առնում այս հավասարակշռությունը, ինչպես նաև այն, որ այս միջոցը մնա որպես բացառություն, և հաջորդ կառավարությունների համար չդառնա վտանգավոր նախադեպ:

բ. Սահմանադրական դատարանի նախագահի վերաբերյալ

54. Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնի մասով այս կարծիքի համար ներկայացված դիմումի պարզաբանումներով առաջարկվում է, որ դադարեցվեն 2005 թ. Սահմանադրության դրույթների համաձայն 2018 թ. մարտի 21-ին ընտրված, գործող նախագահի լիազորությունները, որի պաշտոնավարման ժամկետը որպես դատավոր և որպես նախագահ, սահմանված կարգով ավարտվում է 2035 թվականին: Դիմումի պարզաբանումներում առաջարկվում է նաև, որ նախագահն իր գործընկեր դատավորների կողմից ընտրվի 6 տարի ժամկետով՝ առանց վերստին ընտրվելու իրավունքի՝ համաձայն ներկայումս գործող Սահմանադրությամբ սահմանված կարգի (Հոդված 166(2)): Իշխանությունները համարում են, որ այս լուծումը կհամապատասխանի նաև Սահմանադրության Հոդված 215-ի տրամաբանությանը, որը վերաբերում է դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին և որը սահմանում է, որ «Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատարանների նախագահները և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակվելը կամ ընտրվելը, որն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումից հետո՝ ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում»: Հարկ է նաև ընդգծել, որ դիմումով ներկայացված առաջարկը վերաբերում է լիազորությունների դադարեցմանը միայն որպես նախագահ և չի վերաբերում որպես դատավորի պաշտոնավարման ժամկետին:

55. Վենետիկի հանձնաժողովը վերհիշում է, որ Եվրոպայում կա դատարանի նախագահների, փոխնախագահների և պալատների կամ պանելների նախագահների ընտրության հիմնականում երկու համակարգ: Որոշ երկրներում, օրինակ՝ Գերմանիայում և Ավստրիայում, նախագահին և փոխնախագահին ընտրում են այն մարմինները (Կառավարությունը, Խորհրդարանը), որոնք իրավասու են ընտրելու նաև

մյուս դատավորներին: Մյուս կողմից, զգալի թվով համակարգեր, եթե ոչ դրանց մեծամասնությունը, սահմանում են, որ նախագահը պետք է ընտրվի այդ դատարանի դատավորների կողմից: Այս ամենից վեր և անխուսափելիորեն, նման համակարգի օրինակ է նաև ՄԻԵԴ-ը և ԵՄ արդարադատության դատարանը: Մույն վերլուծության համար կիրառելի են վերջին խմբի չափանիշները: Այստեղ ընդունելի են դատարանի նախագահների պաշտոնավարման ավելի կարճ ժամկետներ, և դրանք նույնիսկ կարող են նպաստել դատավորների շրջանում ավելի շատ կոլեգիայի, քան հիերարխիայի ձևավորմանը: Օրինակ՝ Բոսնիա և Հերցեգովինայում, ուժեղ միջազգային ազդեցության արդյունքում ձևավորված Սահմանադրական դատարանի նախագահն ընտրվում է գաղտնի քվեարկության միջոցով՝ օրենսդիր մարմնի կողմից ընտրված դատավորների ռոտացիայի միջոցով՝ երեք տարի ժամկետով (Բոսնիա և Հերցեգովինայի Սահմանադրական դատարանի կանոնակարգի Հոդված 84), ինչը նույնիսկ ավելի կարճ ժամկետ է, քան Հայաստանի ժամկետը: Ներկայիս կանոնների համաձայն՝ Հայաստանի դեպքում Սահմանադրական դատարանի նախագահը պաշտոնավարելու է 17 տարի, ինչն ավելի երկար ժամկետ է, քան դատավորների համար՝ նոր Սահմանադրությամբ նախատեսվածը ժամկետը: Սա կարող է հանգեցնել նրան, որ նախագահի դերը դառնա գերակշիռ, և նպաստավոր չէ դատավորների միջև կոլեգիալության տեսանկյունից:

56. Բացի դրանից՝ Հանձնաժողովը հաշվի է առնում նաև իշխանությունների այն պնդումը, որ Սահմանադրական դատարանի գործող նախագահի՝ 2005 թ. Սահմանադրության դրույթներին համապատասխան՝ 2015 թ. փոփոխություններն ուժի մեջ մտնելուց ընդամենը երեք շաբաթ առաջ՝ 2018 թ. մարտի 21-ին անցկացված ընտրությունը հակասում է այդ փոփոխությունների էությանը, որոնք նպատակ ունեին մի կողմից երաշխավորելու դատական համակարգի և Սահմանադրական դատարանի անկախությունը Խորհրդարանից, մյուս կողմից՝ ապահովելու ռոտացիա նախագահի պաշտոնում: Այնուամենայնիվ, նա ընտրվել է, երբ պաշտոնավարման ժամկետների վերաբերյալ նոր կանոններն արդեն բավականին ժամանակ ընդունված էին: Նրա վիճակը, հետևաբար, ամբողջովին տարբերվում է նախորդ Սահմանադրության համաձայն ընտրված Սահմանադրական դատարանի նախագահի վիճակից, երբ հայտնի չէր, որ նրա պաշտոնավարման ժամկետը կրճատվելու է:

57. Բացի դրանից՝ նախագահի պաշտոնավարման ժամկետի կրճատումը դատարանի անկախության վրա չունի նույն ազդեցությունը, ինչ բոլոր դատավորների պաշտոնավարման ժամկետների կրճատումը, և միջազգային չափանիշները փաստորեն իր պաշտոնի մասով գործողությունների առավել մեծ ազատություն են տալիս: Դրանք տարբերակում են դատավորների դատական և ադմինիստրատիվ գործառույթները: Վենետիկի հանձնաժողովն իր նախորդ կարծիքներում ընդունել է դատարանի նախագահների պաշտոնավարման ավելի կարճ ժամկետների սահմանումը՝ պայմանով, որ դատավորի կարգավիճակը պահպանվի և որպես դատավոր պաշտոնավարման վրա չազդի դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետի ավարտը ²⁷ : Այնուամենայնիվ, գործնականում կարող է այնքան էլ հստակ չլինել ադմինիստրատիվ գործառույթների և դատական գործառույթների իրականացման միջև տարբերակումը, ինչպես ներկայացվել է վերոնշյալ Բակայի գործում: Թեև Բակայի գործը բավականին տարբերվում է քննարկվող հարցից, քանի որ այն վերաբերում էր Հունգարիայի գերագույն դատարանի նախագահի վեցամյա ժամկետով լիազորությունների վաղաժամկետ դադարեցմանը, այլ ոչ թե այնպիսի դրույթի ներդրմանը, որը սահմանափակում է լիազորությունները մինչև կենսաթոշակային տարիքի լրանալը, ՄԻԵԴ-ը դատական անկախության համատեքստում խնդրահարույց է համարել, որ դիմումատուն հեռացվել է նախագահի պաշտոնից, չնայած նրան, որ շարունակել է պաշտոնավարել որպես այդ դատարանի դատավոր: Վենետիկի հանձնաժողովը նույնպես դատարանի նախագահի լիազորությունների դադարեցումը որպես ընդհանուր բարեփոխումների մաս ընդունելու մասով գոյություն ունի է

²⁷ CDL-AD(2014)021, Գարծիք «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (Դատարանի նախագահների պաշտոնավարման ժամկետը), պարբ. 28-35 :

ցուցաբերել, քանի դեռ համոզիչ պատճառներ չեն ներկայացվել²⁸: Օրինաչափ և համոզիչ պատճառներ ներկայացնելու դեպքում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է դատարանի նախագահի լիազորությունների դադարեցումը կատարել՝ հարգելով իրավական որոշակիության (լեգիտիմ ակնկալիքներ) և համաչափության սկզբունքները:

58. Հարկ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանների կամ գերագույն դատարանների նախագահներն ավելի հեշտ են բախման մեջ մտնում կառավարության, պետության ղեկավարի կամ խորհրդարանական խմբերի հետ, քան սովորական դատավորները: Դատարանի նախագահները հանրության և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար ներկայանում են որպես իրենց դատարանի դեմքը, և կապված են որոշ որոշումների հետ, որոնք կարող են վիճարկվել հանրային բանավեճերի ժամանակ կամ հավանություն չստանալ կառավարության կողմից, չնայած այն հանգամանքին, որ այդ որոշումները կայացվում են դատավորների խմբի կողմից²⁹:

59. Այս հանգամանքներով հանդերձ՝ Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետների, լիազորությունների և պարտականությունների փոփոխությունները հնարավոր են, սակայն պահանջում են զգուշավոր մոտեցում: Հետևաբար՝ խորհուրդ է տրվում նախատեսել անցումային ժամանակաշրջան՝ դատարանի գործող նախագահի մանդատը Հոդված 213-ի հնարավոր փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես դադարեցնելու փոխարեն:

Բ. Երկրորդ հարց. Եվրոպական լավագույն չափանիշների տեսանկյունից արդո՞ք ընդունելի կլինի, եթե Դատարանի լիազորությունների յոթանակի փոփոխությունները սահմանափակվեն փոփոխման ոչ ենթակա սահմանադրական հոդվածների հետ համապատասխանության նախնական սահմանադրական քննությանը, և դրա համար սահմանվի հարստերականորեն կարճ ժամկետ:

60. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հոդված 168(2)-ը և 169(2)-ը սահմանում են Սահմանադրության փոփոխությունների քննություն: Հոդված 168(2)-ը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը: Այս քննության պարտադիր բնույթը հստակ արտահայտված է Հոդված 169(2)-ում, որով նախատեսվում է, որ Սահմանադրության Հոդված 168(2)-ով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան *դիմում է* Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխություններին վերաբերյալ հարցերով: Սահմանադրությունը չի սահմանում այն չափորոշիչները, որոնք Դատարանը պետք է կիրառի սահմանադրական փոփոխությունները քննելիս:

61. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը մասնավորապես իր 86-րդ հոդվածում սահմանում է մանրամասն կանոններ այս կարգի վերաբերյալ: Ըստ դրա մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունելը (ընդհանուր սահմանադրական փոփոխությունների նախագծի ընդունման ընթացակարգում անհրաժեշտ է երկու ընթերցում) քվեարկության է դրվում Սահմանադրական դատարանի կողմից մասին որոշման նախագիծը: Որոշման ընդունվելու դեպքում Ազգային ժողովի նախագահն երկրորդ ընթերցմամբ քննարկված Սահմանադրության փոփոխությունների նախագծի հետ միասին այդ որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է և ուղարկում Սահմանադրական

²⁸ Տես CDL-AD(2014)032, Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ կարծիքը «Վրաստանի ընդհանուր իրավասության դատարանների մասին» օրգանական օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, պարբ. 97-98:

²⁹ Օրինակներ են Լեհաստանի գերագույն և Սահմանադրական դատարանների նախագահները 2015 թվականից հետո, կամ այն երկու դեպքերը, երբ դատավորները ՄԻԵԴ-ում հաջողություն ունեցած դիմումատուներ էին՝ Լիխտենշտեյնի գերագույն վարչական դատարանի (Վիլլի գործը՝ Վիլլին ընդդեմ Լիխտենշտեյնի, թիվ 28396/95, 1999 թ. հոկտեմբերի 28) և Հունգարիայի գերագույն դատարանի նախկին նախագահները (Բակայի գործը):

դատարան: Հարցի քննարկումն ընդհատվում է մինչև Սահմանադրական դատարանի որոշումը ստանալը: Այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող է ճանաչում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, այն շրջանառությունից հանվում է: Հակառակ դեպքում, նրա որոշումը ստանալուց հետո հարցի քվեարկությունը կատարվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:

62. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի Հոդված 72-ի 4-րդ մասի համաձայն՝ Դատարանն այս դեպքում որոշում է ընդունում կամ նախագիծը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու, կամ նախագիծն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ: Նույն դրույթի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումի մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո:
63. Վերոնշյալ իրավական դրույթներից հետևում է, որ գործող «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքը սահմանում են Սահմանադրական դատարանի կողմից նախնական պարտադիր և համակարգային քննություն նախքան սահմանադրական փոփոխությունների առաջարկը կարող է ընդունվել: Այդ իրավական դրույթները չեն սահմանափակում Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության փոփոխությունների նախագծի քննության շրջանակը: Քննության համար նախատեսված միակ ժամանակային սահմանափակումը երեքամսյա ժամկետն է, ինչպես նշված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի Հոդված 72(3)-ում:
64. Ավելին՝ Սահմանադրական դատարանի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների ընթացքում Վենետիկի հանձնաժողովի պատվիրակության կողմից բարձրացված երկու կոնկրետ հարցերին հաջորդեց այն, որ Սահմանադրական դատարանի ներկայացուցիչները տեղեկացրին պատվիրակությանը, որ մինչ այդ պահը սահմանադրական փոփոխությունների նախագծի քննության վերաբերյալ Դատարանի նախադեպային որոշում չի եղել, և այս քննության շրջանակը սահմանափակ չէ և ներառում է Սահմանադրության փոփոխման ոչ ենթակա դրույթները, ինչպես նաև Սահմանադրությունն ամբողջությամբ հետևաբար նաև սահմանադրական փոփոխությունների նախագծի ընդունման ընթացակարգային կանոնները:
65. «Սահմանադրական փոփոխությունների մասին»³⁰ 2010 թ.-ի զեկույցում Վենետիկի հանձնաժողովը տարբերակել է սահմանադրական փոփոխությունների բովանդակային դատական քննության և բուն ընթացակարգային/ֆորմալ քննության միջև, որպեսզի ստուգի և ապահովի, որ փոփոխություններն ընդունվել են սահմանված սահմանադրական ընթացակարգերին համապատասխան ձևով: Ընթացակարգային քննության մասով Հանձնաժողովն ունի դիրքորոշում, որ սահմանադրական բոլոր համակարգերը պետք է ապահովեն ժողովրդավարական և դատական վերահսկողության հնարավորություն՝ ապահովելու, որ սահմանադրական փոփոխություններն ընդունվեն համաձայն սահմանված սահմանադրական ընթացակարգերի: Սա հարց է, որը կարող է համապատասխան ձևով քննվել դատարանում, և դատարանների կողմից այդպիսի ֆորմալ հսկողությունը չի խոչընդոտում սահմանադրի ինքնիշխան իրավունքներին, այլ ծառայում է պաշտպանելու ժողովրդավարությունը:
66. Սահմանադրական փոփոխությունների բովանդակային քննության մասով Վենետիկի հանձնաժողովը որդեգրել է ավելի զգուշավոր մոտեցում ³¹ :Համեմատական սահմանադրական իրավունքում չկան համընդհանուր կերպով ընդունված չափանիշներ, որոնք վերաբերում են Սահմանադրական դատարանների՝ սահմանադրական փոփոխությունների գործընթացում մասնակցությանը:

³⁰ CDL-AD(2010)001 Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ զեկույց, պարբ. 194 և հաջորդ. և 225 և հաջորդ.:

³¹ Տես, օրինակ, CDL-AD(2016)009 Վերջնական կարծիք Ալբանիայի դատական սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ, պարբ. 41:

Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական փոփոխությունների նախագծի պարտադիր նախնական քննություն հազվադեպ է,³² և չնայած կան օրինակներ, որտեղ Սահմանադրական դատարաններն ունեցել են օգտակար ներդրում, որով խթանվել են խորհրդարանական և հանրային հետագա բանավեճերը և դրանց համար ծառայել որպես ուղենիշներ, կան նաև օրինակներ, որտեղ դատարանի նախնական ներգրավվածությունը փոփոխությունների գործընթացում ավելորդ կոշտություն է առաջացրել և արդյունքում արգելափակել քաղաքական բանավեճը:³³

67. Ըստ Հանձնաժողովի՝ սահմանադրական փոփոխությունների բովանդակային քննությունը պետք է կատարվի միայն այն երկրներում, որտեղ դա բխում է հստակ և արդեն ձևավորված դոկտրինից և նույնիսկ այդ պայմաններում այն պետք է իրականացվի զգուշորեն՝ տալով սահմանադրական օրենսդրին թույլատրելի հայեցողության շրջանակ:³⁴ Եթե սահմանադրության փոփոխությունների համար հատուկ պահանջները, ինչպիսիք են՝ խորհրդարանում ընտրված ներկայացուցիչների մեծամասնությունը, ինչպես նաև այլ ընթացակարգային պահանջները, կատարվում և պահպանվում են, ապա դա հնարավոր չարաշահումները կանխելու համար բավարար պետք է լինի և բավարար է: Նման ընթացակարգերը պահպանելով ընդունված փոփոխությունները ընդհանուր առմամբ կունենան ժողովրդավարական լեգիտիմության շատ բարձր աստիճան, ինչը մերժելուն դատարանն ամեննին չպետք է հակված լինի:
68. Հետևաբար՝ Հանձնաժողովը ընդհանուր առմամբ նախընտրում է սահմանափակել Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության փոփոխությունների քննությունը զուտ ընթացակարգային հարցերով: Իրապես ցանկալի է, որ, օրինակ, խորհրդարանական փոքրամասնությունը հնարավորություն ունենա դիմելու Սահմանադրական դատարան՝ հայցելով, որ Դատարանը քննի, թե արդյոք սահմանադրական փոփոխությունների ընդունման ընթացակարգը պահպանվել է: Սա նույնը չէ, ինչ դատարանի կողմից ընդհանուր նախնական քննությունը:
69. Այնուամենայնիվ, եթե ՀՀ Սահմանադրության նման սահմանադրությունը սահմանում է նախնական քննություն, ապա բնական է, որ այդ կանոնը պետք է կատարվի: Սահմանադրական դատարանի նախնական քննության սահմանափակումը Սահմանադրության անփոփոխելի դրույթների հետ փոփոխությունների համապատասխանության ստուգմամբ համապատասխանում է եվրոպական ստանդարտներին, եթե այդ սահմանափակումը չի հակասում Սահմանադրության տեքստին³⁵ : Դատական քննության ծավալը, հետևաբար, կախված է Սահմանադրության՝ փոփոխման ոչ ենթակա դրույթների սահմանումից: Սահմանադրական «անփոփոխելիությունը» պետք է պետք է նեղ մեկնաբանություն ունենա: Համաձայն ՀՀ Սահմանադրության Հոդված 203-ի փոփոխման ենթակա չեն Սահմանադրության միայն 1-3-րդ և 203-րդ հոդվածները, ինչը սկզբից բավականին սահմանափակ է թվում սահմանադրական փոփոխությունների նախնական քննության տեսանկյունից: Հաշվի առնելով հանդիպումների ընթացքում Սահմանադրական դատարանի ներկայացուցիչների արած հայտարարությունը, որ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական փոփոխությունների քննությունը կարող է ներառել ամբողջ Սահմանադրությունը, Հանձնաժողովը գտնում է, որ Սահմանադրական դատարանի լայն մեկնաբանությունը հենց իր՝ նախնական քննություն կատարելու լիազորության վերաբերյալ չի լինի տեղին: Խնդրահարույց կլինի, եթե Սահմանադրական դատարանն անվավեր ճանաչի սահմանադրական փոփոխությունները՝ հիմնվելով Սահմանադրության անփոփոխելի դրույթների հետ թույլ կապ ունեցող վերացական սկզբունքների վրա, կամ հիմնվելով այդ դրույթների

³² Տես, օրինակ, CDL-AD(2010)001, պարբ. 194:
³³ Տես, CDL-AD(2015)045, Միջանկյալ կարծիք Ալբանիայի դատական սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ, պարբ. 20-21, CDL-AD(2010)001, պարբ. 195:
³⁴ CDL-AD(2010)001, պարբ. 235:
³⁵ Որոշ Սահմանադրություններով, օրինակ՝ Ուկրաինայի Սահմանադրությամբ արգելվում է մարդու իրավունքների պաշտպանության չափանիշների իջեցումը:

վերաբերյալ իր կողմից ներկայացված լայն մեկնաբանության վրա:

- 70. Այսպիսի նախնական ընթացակարգի վերջնաժամկետի մասով, անհրաժեշտ է ապահովել հավասարակշռություն Մահմանադրությամբ սահմանված ծավալի արդյունավետ դատական քննության և սահմանադրական օրենսդրի կամքի արտահայտման միջև նաև հնարավոր արտակարգ իրավիճակում: Հասկանալի է, որ ազգային օրենսդիրը թույլատրելի հայեցողության որոշակի շրջանակ կունենա այդպիսի հավասարակշռություն ապահովելիս, իսկ նախնական քննության բավականին կարճ ժամկետը (երկու շաբաթ) խնդրահարույց չի թվում նաև հաշվի առնելով այս համատեքստում Եվրոպայի համակարգերի բազմազանությունը:
- 71. Իշխանությունների և այլ շահառուների հետ հանդիպումների ընթացքում հնչեցրած մեկ հատուկ հարց է, երբ Մահմանադրական դատարանը պետք է քննի Դատարանի դատավորների մանդատի վերաբերյալ սահմանադրական փոփոխությունները, ապա արդյոք չկա շահերի բախում, որը կխոչընդոտի դատավորների կողմից սահմանադրական փոփոխությունների քննությանը: Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ պետք է ապահովվի, որ որպես Մահմանադրության երաշխավոր՝ Մահմանադրական դատարանը գործի որպես ժողովրդավարական ինստիտուտ, և որ դատավորներին հարցի քննությունից հեռացնելը չհանգեցնի նրան, որ Դատարանի որոշում կայացնելը անհնարին դառնա: Համաձայն «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի Հոդված 14(2)-ի՝ Մահմանադրական դատարանի դատավորը չի կարող օգտագործել դատավորի պաշտոնի հեղինակությունն իր շահերի համար: Համապատասխանաբար, եթե Դատարանի դատավորը գտնում է, որ կլինի շահերի բախում, եթե նա քննի մանդատին առնչվող սահմանադրական փոփոխությունները, ապա, համաձայն Հոդված 14-ով սահմանված կանոնի՝ նա պետք է հրաժարվի գործը քննել ըստ ընդհանուր կանոնների: Այդուհանդերձ Վենետիկի հանձնաժողովի համար կարևոր է, որ լինի հստակ տարանջատում Մահմանադրական դատարանի անկախության վերաբերյալ սահմանադրական ինստիտուցիոնալ սկզբունքների և դատավորների անձնական շահերի միջև: Այս առումով Մահմանադրական դատարանը պետք է կիրառի ծայրահեղ ինքնազսպում, որպեսզի խուսափի ստեղծել տպավորություն, թե հենց Դատարանի վերաբերյալ փոփոխություններ քննելիս գործում է դատավորների անձնական շահերի համար:

Գ. Երրորդ հարց. արդյոք Ազգային ժողովը չպետք է ունենա լիազորություն՝ չեղարկելու ավելի վաղ նշանակված հանրաքվեն, որը կասեցվել է համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության հետևանքով:

- 72. Վենետիկի հանձնաժողովը նախ նկատում է, որ Մահմանադրության Հոդված 202-ում նշված են այն տեքստերը, որոնք կարող են փոփոխվել միայն հանրաքվեի միջոցով, և այնտեղ նշված չէ Հոդված 213-ը: Հետևաբար, ընտրության հարց է անցկացնել հանրաքվե, թե ոչ: Քաղաքական բարդ իրավիճակում ուղիղ ժողովրդավարությունը կարող է ծառայել որպես վերջին միջոց գտնելու *որևէ* լուծում, սակայն այն երկու եզր ունեցող սուր է, ինչն էլ դժվար թե այն դարձնի ամենահարմար տարբերակը այնպիսի սահմանադրական դրույթների դեպքում, որոնց նպատակն է գտնել նուրբ հավասարակշռություն վերջերս բարեփոխված հաստատությունների շտկման գործընթացում:
- 73. Այս նախնական դիտարկումներից հետո Վենետիկի հանձնաժողովը գտնում է, որ հանրային իրավունքի ընդհանուր սկզբունք է, որ լիազոր մարմնի կողմից ընդունված նորմերն ու որոշումները կարող են չեղարկվել նույն մարմնի նոր որոշմամբ, որն ընդունվել է նույն ընթացակարգով: Բնարկե, կան բացառություններ, օրինակ, այն դեպքում, երբ որոշումն առաջացնում է նորմերի կիրառման օրինական սպասելիքներ կամ իրավունքների և պարտականությունների ընձեռնման օրինական սպասելիքներ՝ անհատական դեպքերում: Այս դեպքում նման բացառություններ կիրառելի չեն: Բացի դրանից՝ այն փաստը, որ Մահմանադրական դատարանի կողմից չքննված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի անցկացման օրինականությունը կարող է հարցի տակ դրվել (համեմատեք վերոնշյալ պարբերություն 20-ը, 21-ը, 60-ը և

հաջորդող պարբերությունները), մի հանգամանք է, որը Խորհրդարանը կարող է հաշվի առնել հանրաքվեի հնարավոր չեղարկման հարցը դիտարկելիս:

V. Եզրակացություններ

74. Սույն կարծիքում, որ կազմվել է Արդարադատության նախարարի դիմումի հիման վրա, Վենետիկի հանձնաժողովն անդրադարձել է սահմանադրական փոփոխությունների նախագծի համատեքստում իշխանությունների երեք իրավական հարցերին: Որպես այդպիսին, սույն Կարծիքը նպատակ չունի արտահայտելու վերջնական դիրքորոշում սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ, այլ միտված է տրամադրելու իշխանություններին նյութ այն մասին, թե Սահմանադրական դատարանի դատավորների մանդատի վերաբերյալ պլանավորված փոփոխությունները որքանով են համապատասխանում եվրոպական չափանիշներին՝ մասնավորապես այն չափանիշներին, որոնք վերաբերում են դատական իշխանության անկախությանը:
75. Իշխանություններն այս համատեքստում բարձրացրել են երեք հարց. Սահմանադրական դատարանի գործող դատավորների և նախագահի մանդատի, Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական փոփոխությունների նախնական քննության շրջանակի և քննության ժամկետի վերաբերյալ, որի ընթացքում Սահմանադրական դատարանը պետք է ավարտին հասցնի քննության ընթացակարգը, ինչպես նաև Խորհրդարանի համավարակի պատճառով ստեղծված արտակարգ դրության հիմքով կասեցված, նախապես հայտարարված հանրաքվեն չեղարկելու հնարավորության վերաբերյալ:
76. Առաջին հարցն առաջարկում է Սահմանադրության անցումային Հոդված 213-ի փոփոխությամբ Սահմանադրական դատարանի դատավորների համար 2015 թ.-ին ներդրված պաշտոնավարման ժամկետը (տասներկու տարի) ուժի մեջ մտցնել բոլոր այդ թվում նաև այն դատավորների համար, որոնք նշանակվել են մինչև 2015 թ. փոփոխությունների ուժի մեջ մտնելը: Արդյունքում, ըստ նոր կանոնների 12 տարի պաշտոնավարած դատավորները կդադարեցնեն պաշտոնավարումը, իսկ այն դատավորները, որոնք նշանակվել են մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը, բայց պաշտոնավարել են 12 տարուց քիչ, կշարունակեն պաշտոնավարել մինչև պաշտոնավարման 12 տարին լրանալը: Հաշվի առնելով կարևորությունը, որ տրվում է դատական իշխանության, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի անկախությունը երաշխավորելու համար դատավորների պաշտոնավարման ժամկետի երաշխավորվածության հարցին, Հանձնաժողովը գտնում է, որ Սահմանադրական դատարանի նոր մոդելը կյանքի կոչելու պատշաճ ձև կարող է լինել հետևյալը. պահպանել գործող դատավորների պաշտոնավարման ժամկետները և թույլ տալ, որ աստիճանաբար ներդրվեն պաշտոնավարման նոր ժամկետները՝ նորմալ փոխարինման միջոցով:
77. Այնուամենայնիվ Հանձնաժողովն ընդունում է, որ օրինաչափ է իշխանությունների ցանկությունը ապահովելու, որ Սահմանադրական դատարանի կազմը ողջամիտ ժամկետում արտացոլի գործող Սահմանադրության դրույթները, որոնք երաշխավորում են Դատարանի անկախության բարձր չափանիշները: Հանձնաժողովն ընդունում է նաև, որ հիմնավոր է իշխանությունների Սահմանադրական դատարանի դատավորների կարգավիճակի հավասարությունն ապահովելու վերաբերյալ մտահոգությունը: Հանձնաժողովը նաև գտնում է, որ 2015 թ.-ի փոփոխությունների ընդունման և դրանց վերջնական իրագործման միջև եղած ժամանակահատվածը սովորականից երկար է և արդյունքում հանգեցնում է նրան, որ ծայրաստիճան հետաձգվեն փոփոխությունների դրական արդյունքները՝ Սահմանադրական դատարանի անկախության համատեքստում:
78. Այս բացառիկ հանգամանքներում Հանձնաժողովն այն կարծիքն ունի, որ տարբեր շահերի բախման խնդիրը վերացնելու հնարավոր լուծում կարող է լինել հետևյալը. փոփոխել գործող Հոդված 213-ը՝ նախատեսելով Սահմանադրական դատարանի կազմի թարմացում միաժամանակ նախատեսելով անցումային ժամանակաշրջան, որը թույլ կտա աստիճանաբար փոխել Դատարանի կազմը՝ խուսափելու այս հաստատության

անկախությունը վտանգող կտրուկ և արագ փոփոխություններից: Իշխանություններն ունեն ամենաճիշտ դիրքը արդյունավետ գնահատելու նման անցումային ժամանակաշրջանի տևողությունը հավասարակշռելով մրցակցող հանրային շահերը: Կարևոր է, որ փոփոխություններն իրականացվեն աստիճանաբար՝ որոշակի ժամանակահատվածում, և կարևոր է ապահովել, որ այս միջոցը մնա բացառություն և չդառնա վտանգավոր նախադեպ հաջորդող կառավարությունների համար:

79. Ինչ վերաբերում է Դատարանի նախագահին, թեև միջազգային չափանիշներն այս պաշտոնի համար ավելի մեծ ազատություն են տրամադրում, դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետի փոփոխության համար նույնպես պահանջվում է զգուշավոր մոտեցում: Հետևաբար՝ նախընտրելի է նախատեսել անցումային ժամանակաշրջան՝ Հոդված 213-ի հնարավոր փոփոխության ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո դատարանի գործող նախագահի մանդատը դադարեցնելու փոխարեն:
80. Երկրորդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը նշում է, որ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական փոփոխությունների ընդհանրական նախնական քննության շրջանակի սահմանափակումը փոփոխման ոչ ենթակա դրույթների համապատասխանության ստուգմամբ համապատասխանում է եվրոպական չափանիշներին: Դատական քննության ծավալը կախված է փոփոխման ոչ ենթակա դրույթների վերաբերյալ Սահմանադրության մեջ տրված սահմանումից, և սահմանադրությամբ սահմանվող «անփոփոխելիությունը» պետք է նեղ մեկնաբանություն ստանա: Հանձնաժողովը նախազգուշացնում է Սահմանադրական դատարանին հենց իր կողմից նախնական քննություն անցկացնելու լիազորության լայն մեկնաբանման վերաբերյալ, որը հիմնվում է Սահմանադրության անփոփոխելի դրույթների հետ թույլ կապ ունեցող վերացական սկզբունքների կամ այդ դրույթների իր լայն մեկնաբանության վրա: Սահմանադրական դատարանը պետք է, մասնավորապես, կիրառի ծայրահեղ ինքնազսպում և խուսափի ստեղծել տպավորություն, թե հենց Դատարանի վերաբերյալ փոփոխություններ քննելիս գործում է դատավորների անձնական շահերի համար: Նախնական քննության համար սահմանված բավականին կարճ ժամկետը խնդրահարույց չէ:
81. Երրորդ հարցի մասով հարկ է նշել, որ հանրային իրավունքի ընդհանուր սկզբունք է, որ լիազոր մարմնի կողմից ընդունված նորմերն ու որոշումները կարող են չեղարկվել նույն մարմնի նոր որոշմամբ, որն ընդունվել է նույն ընթացակարգով: Հետևաբար՝ Խորհրդարանը պետք է լիազորություն ունենա չեղարկելու իր ավելի վաղ կայացրած որոշումը հանրաքվե անցկացնելու վերաբերյալ, որը կասեցվել է համավարակի հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակի պատճառով:
82. Հանձնաժողովը ցավում է, որ Վենետիկի հանձնաժողովի այս կարծիքի ընդունման օրը Հայաստանի խորհրդարանում ներկայացվել է սահմանադրական փոփոխությունների առաջարկ, որի առաջարկությունը չի համապատասխանում սույն կարծիքում ներկայացված առաջարկություններին:
83. Վենետիկի Հանձնաժողովը մնում է Հայաստանի իշխանությունների տրամադրության տակ՝ այս հարցում հետագա աջակցության համար: